

Բ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն Մ Ա Ս Ն.

ԳՈՐԻՍ.—Ջանգեղուրի ոստիկանական շրջանը այժմ բաժանւում է չորս մասի,—Հաջիսամլու, Ալիանլի, Բարկուշատ և Հաքարու: Հաջիսամլիի մասը բռնում է Զալվա-չայի, Ալաքչու և Հոչասի ջրաբաշխները. Ալիանլուն՝ Հաքարի-ղետի ձախ կողմը, որ տարածւում է Զուշի-Գորիսեան խճուղուց հարաւ: Բարկուշատի և Հաքարու մասերը բռնում են Բարկուշատ և Հաքարի ղետերի ստորին և միջին ընթացքների ափերը ¹⁾: Այս գաւառամասի գրեթէ մէջ տեղում գտնւում է Գորիս-աւանը, որ բաժանւում է Հին և Նոր մասերի: Այս վերջինը կազմում է Ջանգեղուրի գաւառի կենտրոնը: Այստեղ են զետեղուած բոլոր վարչական հաստատութիւնները, այստեղ են խմբուած այս գաւառամասի ինտիլլիգենտ և առևտրական ուժերը:

Գորիսի արևելեան կողմում ձգւում է Տեղի, իսկ արևմտեան կողմում Ուչ-Թափալարի բարձրաւանդակները. սրանք դէպի հարաւ մօտենում են միմեանց, իսկ հիւսիսային կողմում հեռանում են միմեանցից, կազմելով մի փոքրիկ հովիտ, որի միջով հոսում է Գորիսի-ղետակը:

Տեղի բարձրաւանդակը կտրւում է մի ուշիշ ձորակով, որ արևելքից իջնում է դէպի արևմտահիւսիս: Ձորակի մօտ բարձրանում է Լաստ գագաթը, իսկ սրա մօտ՝ մի ապառաժ, բարձր ժայռ, որի վրայ հնումը բերդ է եղել: Այժմ նրա բնականից փորուած, տեղ տեղ նոր պատով կարկատած սլարսպի հետքերն են մնում: Բերդի ժայռն իւր շարունակութեան վրայ ունի զանազան մեծութեան կոնաձև զագաթներ, որոնք կազմուած են ջրի ազդեցութեամբ: Նոյնպիսի կոնաձև ժայ-

¹⁾ Зелинский. Исслѣд. экон. быта госуд. крестьянъ въ Загезурскомъ уѣздѣ. Եր. 9.

ուեր շարուած են մօտակայ ձորակի երկու կողմին ևս: Սրանք ընդհանրապէս կարմիր աւազի շերտերից են բաղկացած, տեղ-տեղ ժայռ քարերի խառնուրդով: Կան, որպէս բացառութիւն, սպիտակներ էլ: Նոյնպիսի կազմութիւն և կարմիր կամ սպիտակ գոյն ունի և՛ բարձրաւանդակի բերդի հանդէպ գտնուող լանջը, որ ուղղահայեաց զառիւփայր ունի: Այս լանջի, ինչպէս և ձորակի և բերդի քերձի մէջ կան բազմաթիւ, մեծ և փոքր արհեստական քարայրեր, որոնք երբեմն ծառայել են որպէս բնակարաններ, իսկ այժմ առաւելապէս որպէս խոտանոցներ են դործածուած: Ահա այս արհեստական քարայրներն են կազմել մելիքանիստ Գորիս գիւղը, որի աղքատ դասակարգը դարձեալ շարունակում է այդպիսի բնակարաններ կտրել իւր համար: Իսկ հարուստներն սկսել են շինել կանոնաւոր տներ: Գիւղի կենդրոնում գտնւում է հին, հասարակ եկեղեցին, իսկ սրա մօտ՝ Մելիք Հիւսէինեանների նախկին ապարանքը, որ այժմ աւեր է:

Գիւղն ընդհանրապէս կեղտոտ է, անկանոն և միմեանց վրայ դիզուած տներով ու նեղ, ծուռ ու մուռ փողոցներով:

Սրա հակապատկերն է ներկայացնում Նոր-Գորիսը, որ հնից բաժանւում է Գորիսի գետով: Սա հիմնուած է 1870 թ. Ստարացկի դաւառապետի ձեռքով և Մանուչար-բէկ Մելիք-Հիւսէինեանի խորհրդով: Սրա տեղը հարթ է, նեղ, բայց բաւական երկար: Հինգ կանոնաւոր և շատ լայն փողոցներ ձգւում են հարաւից հիւսիս, հետզհետէ հիւսիսային կողմից աւելի և՛ աւելի երկարելով: Ուրիշ հինգ փողոցներ էլ խաչաձև կտրում են այս փողոցները: Գրեթէ կենդրոնում գտնւում է մի մեծ հրապարակ, որից ներքեւ կան մի շարք խանութներ, իսկ սրանց առաջ նոր տնկած քաղաքային ընդարձակ պարտէզը, հասարակ, փայտէ ցանկապատով: Այս պարտէզը մի փողոցով բաժանւում է վերին և ներքին մասերի, իսկ այս փողոցի եզրին կանգնած է Գ. Միրումեանի աղբիւրը, որի ջուրը չորս խողովակներից դուրս է թափւում գետի մէջ:

Տներն ընդհանրապէս գեղեցիկ են, մեծ մասամբ երկյարկանի, տաշած քարից շինած, փայտէ կտուրներով ծածկուած:

Գրեթէ բոլոր տներն իրենց առջև պարտեզներ ունին, մի քանի պտղատու ծառերով:

Եկեղեցին, որ այժմ է միայն շինւում սաստիկ դանդաղութեամբ՝ բաւական փոքր է և առանց համաչափութեան. — դռները անհամեմատ մեծ են, իսկ պատուհանները չափազանց նեղ:

Միակ, պետական, երկդասեան տղայոց դպրոցի շէնքը շատ հասարակ և անյարմար է:

Բնակիչները հայ լուսաւորչականներ են, ընդամենը 460 տուն, 1697 ար. 1449 իգ. ի միասին՝ 3146 հոգի:

Պարապում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ և առևտրով: Զուկան կենդանութիւն է ստանում՝ երբ սար դնացող թուրքերը լցւում են աւանը:

Նոր Գորիսից դէպի հիւսիս, հազիւ մի վերստ հեռաւորութեամբ միւսնոյն հովտում գտնւում է մի քարաշէն, գեղեցիկ վանքի աւերակ, քանդուած պարսպով ու մի քանի խցերով: Մի քիչ ներքև վազելիս է եղել մի սառնորակ աղբիւր, որ այժմ Գ. Միրումեանի ծախսով տարուած է Նոր Գորիս: Ո՛չ մի արձանագրութիւն չկայ բոլոր աւերակների վրայ, միայն աւանդութիւնը պատմում է, թէ սա երբեմն շատ հարուստ վանք է եղել, ունեցել է բազմաթիւ հօտեր, որոնց տուած կաթը խողովակներով հոսել է սարից մինչև վանքը: Այստեղ է եղել և այն զօրաւոր (զօռ) զանգը, որ իւր անունը տուել է գաւառին ¹⁾:

ԶԱՅԵԶՈՐ, — Այս վանքից դէպի արևելահիւսիս ձգւում է մի բաւական խոր ձոր, որի միջով հստում է Գորիս-գետի օժանդակ Զոռ-ջուր վտակը, որի անունով և կոչւում է ձորը: Իսկ այն մասը, որ երկու կողմից պատած է բարձր ժայռերով, և որոնց մէջ կան բաւական թուով քարայրեր՝ կոչւում է Զաղե-ձոր կամ Ծակերի-ձոր: Այս «ծակերը» կամ «քրատակերը» հեշտութեամբ փորուած են ձորի լանջերին, որովհետև Զանգեզուրը մի ժամանակ ջրի տակ լինելով՝ այս բարձրութիւն-

¹⁾ Տես եր. 7.

ները գոյացել են աւագախառն հողի շերտերից: Այս ծակերը զանազան մեծութեան են, և նրանցից մի քանիսը միմեանց հետ միացած են նեղ անցքերով: Ծակերից շատերը շատ բարձրը են գտնւում, և այն էլ այնպիսի ուղղահայեաց տեղերում, ուր ոչ մի մարդկային ոտք չէ կարող բարձրանալ: Ծերունիները պատմում են, թէ լսել են իրենց պապերից, որ այդ ծակերում բնակուողները թոկեր էին քաշ տալիս և բռնած բարձրանում: Մինչև անգամ այժմ էլ մի ծակի վերև մի դերան է ձգուած, որից հաւանականօրէն կապելիս են եղել թոկը: Ծերունիները նկարագրում են, թէ ինչպէս կանայք, երեխան մէջքերին կապած, ճարպիկութեամբ բարձրանալիս են եղել այդ թոկերով: Դրանց խօսքերը հաստատւում են Աբրահամ Արեւմտացու վկայութեամբ, որ ասում է խնձորեսկի մասին. «Ի բարձրաբերձ տեղիս յայսկոյս և յանկոյս դէմ յանդիման միմեանց՝ փորեալ ապառաժ վէմս քարայր, որ են հողաբանք, իւրաքանչիւր ոք վասն իւրեանց տուն բնակութեան շինեալ բնակէին. և այն էր զարմանք, որ կաշէ փոկովք ելանէին և իջանէին կանայք՝ զստնդեալ տղայս կապեալ ի վերայ ողին իւրեանց, նոյնպէս և զսափորն ջրոյ և հարկաւոր իրաց. այնպէս փոկով ելանէին ի վեր և մտանէին ՚ի բարձրագոյն որջս վիմաց, և քարշէին զփոկէ առասանն ի վեր. մարդ ոչ կարէր ելանել»:

Քարայրներից նշանաւոր է «Աարմիր եկեղեցի» կոչուածը, որ մինչև այժմ էլ Աարմիր կիրակէի օրը բազմաթիւ ուխտաւորներ են գնում, գլխաւորապէս Հին և Նոր Գորիսներից: Սա գտնւում է ձորի աջ կողմում, գրեթէ գագաթին: Դաշտի վրայ կայ մի փոքրիկ գերեզմանատուն, որտեղից մի նեղ կաճան քերծի լանջերի վրայով իջեցնում է դէպի ձորը, ուր բացւում է մի փոքրիկ քարաշէն դուռն: Անցնելով այս դռնից, մտնում էք 9,23 մետր (4 ս. և 1 արշ.) երկ. 4,97 մ. (2 ս. և 1 արշ.) լայնութեան և 2,84 մ. (4 արշ.) բարձրութեան մի այրի մէջ, որի միայն ձորահայեաց կողմը քարէ պատ է քաշած:

Հիւսիսային կողմում շինուած է սեղանը, որի վրայ դեռ ևս կանգուն մնում է վէմքարը: Ինչպէս երևում է՝ տեղը անյարմար լինելով՝ հիւսիսային կողմումն են զետեղել սեղանը:

Արևմտեան կողմում, հողի մէջ փորուած է աւազանը: Սեղանի վրայ կան բաւական թուով կաւէ կանթեղներ, որոնցից միջինը շատ գեղեցիկ է:

Կարմիր եկեղեցուց փոքր ինչ վեր, նոյն ձորակում, վտակի անմիջապէս ափին գտնւում է մի քարաշէն փոքրիկ եկեղեցու աւերակ, որի դռան կամարակալ քարի վրայ դրուած է. Յիսասակ է սբ. եկեղեցիս Մելիք Յիսանին եւ իւր ծնողացն Մելիք Բաղուն քվ. ՌՄԺԳ.

Սոյն եկեղեցու հանդէպ գտնուող ժայռի զազաթին նկատելի են փորուածքներ: Ասում են, թէ այստեղը ծառայելիս է եղել որպէս բերդ:

ՍԻՆԴԱՐԱ. — Չազեձորից փոքր ինչ բարձր ձգւում է մի ուրիշ հովիտ, որ կոչւում է Սին-Պարա: Այս տեղ կայ մի քարաշէն, կամարակալ եկեղեցու աւերակ և բաւականաչափ «քարատակ»-ներ, մի քանիսը քերձերի, միւսները հողի մէջ փորուած:

Ծերունիների ասելով՝ սա «Վէրի շէնի», այսինքն Հին Գորիսի ամարանոցն է եղել:

ՀԻՆ ԳՈՐԻՍ ԿԱՄ ՎԷՐԻ ՉԷՆ. — Գորիս գետի ուղղութեամբ, դէպի հիւսիս ձգւում է բլրակների մի շարք, որոնց մէջ կայ մի բարձր, կարմիր ժայռ. տեղացիները սրան կոչում են «Պղնձաքար» և սրա անուամբ էլ ամբողջ բլրակների շարքը՝ Պղնձաքարի սարեր: Այս Պղնձաքարի ժայռի մէջ կայ մի բնական, 10,65 մ. (5 ս.) երկ. 8,52 մ. (4 ս.) լայն. և մօտ 6,39 մ. (3 ս.) բարձրութեան բնական այր, ուր այժմ ոչ խարներ են մակաղում: Այս ժայռից փոքր ինչ հիւսիս, նոյնանուն բլրակների լանջին, գտնւում է Վէրի շէն կամ Հին Գորիս գիւղը: Այստեղ էլ տների մեծագոյն մասը, մանաւանդ հները, «քարատակ»-ներ են, միայն ոչ թէ քերձերի, այլ ուղղակի բլրի լանջին փորուած: Սրանցից շատերը հէնց այժմ էլ ծառայում են որպէս բնակարաններ, և բացի բոլոր միւս անյարմարութիւններից, ունին նաև այն անտանելի պակասութիւնը, որ գարնանը նրանց մէջ սաստիկ կաթում է:

Գիւղում կայ մի փոքրիկ, կիսով չափ քերձի մէջ փո-

րուած եկեղեցի Նարակնունք (Նորակնունք) անունով, որի դր-
ռան կամարակալ քարի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.
«Թ. ՌՀԷ. Ես Նասիպ կանգնեցի սբ. եկեղեցիս ՚ի փրկու-
թիւն հոգւոյս»: Այս եկեղեցին այժմ էլ իբր աղօթատեղի է
ծառայում: Բացի սրանից կայ նաեւ մի ուրիշ եկեղեցու աւե-
րակ:

Այս գիւղում այժմ բնակւում են 40 տուն հայեր, 219
ար. 193 իգ. 312 հոգի ընդամենը: Գիւղացիների պարապ-
մունքը երկրագործութիւնն ու անասնապահութիւնն է:

Մելիք-Հիւսէինեան Մանուչար-բէկը պատմում էր, թէ
այս գիւղում եղել է երկու բրգաձև, բարձր շինութիւն: Իւր
հայրը, Մելիք-Յարութիւնը, հրամայել է քանդել դրանցից
մինի գլուխը, և երբ մի անցք է բացուել՝ մի մարդ են կախել
ներքէ. սա իջել է բաւական ցած և գետնի մէջ տեսել է ա-
հագին ժայռ քարերով ծածկուած, երկու սենեակ, որոնցից մի-
նի մէջ գտել է ձիու բրոնզէ սանձ: Այն ահագին սանձը այժմ
էլ մնում է Մանուչար-բէկի մօտ: Վերջին ժամանակներս այդ
հինաւուրց շինութիւնները քանդուել են:

Վերի-ձէնից դէպի հիւսիս, մօտ 2 վերստ հեռու մի ձո-
րակի մէջ բղխում է մի սառնորակ աղբիւր: Սրա մօտ կան
ահագին քրճեր, որոնցից ամենամեծի մէջ կան երեք մեծ «քա-
րատակ». սրանցից երկուսը միմեանց հետ հաղորդակցում
են արհեստական կերպով բացուած մի կլոր ծակով: Սրանց
մօտ կայ և մի ուրիշ, փոքրիկ քարատակ, որ երկու նեղ անցք-
ունի: Սա սրբատեղի է համարւում, և թէպէտ ոչ մի խաչ,
ոչ մի պատկեր չկայ, բայց և այնպէս՝ ձէթի հին կանթեղներ
են վայր ածած մեծ թւով, և ամբողջ քարատակը սեւացած է
վառուած ձէթի ճրագների և մոմերի ծուխից: Դեռ այժմս էլ
Գորիսից շատ ուխտաւորներ են գալիս այստեղ: Այս ժայռերի
դիմաց մի ուրիշ ժայռ ևս կայ, երկու, միմեանց հետ հաղոր-
դակցութիւն ունեցող, բնական ալրերով: Սրանցից մէկի ան-
կիւնում մի օճախ կայ, որ ցոյց է տալիս, թէ սրանք մի ժա-
մանակ իբր բնակարան են ծառայել:

Սրանցից էլ մօտ 40 մետր հեռու, Վարարակի ափին,

դարձեալ գտնուում են քերձեր, որոնց մէջ կայ մի ահագին այր, որ հաղորդակցում է ուրիշ երկու, փոքրիկ այրերի հետ:

Քիչ էլ հեռու, նոյն վարարակի մօտ, կայ մի ուրիշ, բոլորովին կարմիր քերձ, որի մէջ ևս կան բաւականաչափ քարատակեր:

Գորիս — գետի հովիտը շարունակուում է նաև Գորիսից ներքև, դէպի արևելահարաւ, և զնալով լայնանում ու խորանում է: Չորի երկու լանջին կան բաւական թուով քարայրեր, որոնցից մի քանիսը շատ մեծ են և շատ բարձր տեղ են գտնուում: Սրանք մի տեղում չեն խմբուած, այլ ցրուած են: Նկատելի է, որ այս այրերից շատերն արհեստական են եղել և հաւանօրէն շինուած են պաշտպանութեան համար: Կան նաև այնպիսիներ, որոնց մասին կարելի է կարծել թէ ջրի ազդեցութեամբ են կազմուել: Այս ձորն այժմս էլ ամբողջովին պատած է այգիներով, ուր բացի խաղողի որթից, կան նաև թթենիներ, կեռասենիներ, խնձորենիներ և այլն: Ինչպէս երևում է՝ հին ժամանակներումն էլ այս ձորն առատ է եղել խաղողի որթերով, որովհետև ժայռերի մէջ հնձաններ են փորուած:

Նշանաւոր է նաև այն, որ հնձանների մօտ շինուած են ձի կապելու տեղեր, ուր ձին միշտ կապած պատրաստ է եղել՝ աւազակների յարձակման դէպքում, տիրոջը փախցնելու: Ժողովուրդը դեռ այսօր էլ լիշում է, թէ Պարսից տիրապետութեան ժամանակ իր քան վտանգաւոր էր այդ ձորով անցնելը: Այս ձորի աջ ափին, Գորիսից հազիւ երկու քիլոմետր հեռաւորութեան վրայ, բարձրանում է Օփաւոր բերդը: Սա ձորի գագաթին բարձրացող մի ահագին ժայռի վրայ է գտնուում, որի մէջ երևում են բաւական թուով քարայրեր: Պարսպը նոյն-իսկ ժայռից է փորուած, իսկ տեղ-տեղ՝ արհեստական պատ է քաշած:

Մի քիլոմետր էլ հեռու, դարձեալ գետի աջ ափին, բաց փոքր ինչ հեռու և բարձր՝ գտնուում է Քարահունջ գիւղը, որտեղ է ձուռան ջրվէժը: Այս գիւղի տները միմեանց վրայ կիտուած, մի քանիսը քարատակ, մի քանիսը դարադամ, մի քանիսն էլ կանոնաւոր, փայտէ կտուրներով զեղեցիկ սենեակներ

ենք: Հին եկեղեցին այժմ աւերակ է, իսկ նոր եկեղեցին շինուած է հին գերեզմանատան մէջ: Գիւղի արեւելեան մասը 1889 և 1896 թուերին երկրաշարժից պատառուել և նստել է (փոս է ընկել), ուստի բնակիչները տեղափոխուել են միւս մասը:

Այս գիւղում, ինչպէս ասել ենք՝ կան երկաթի և կաւիճի անմշակ հանքեր և ծծմբային տաք ջուր:

Բնակիչները բնիկներ են, 105 տուն, 543 ար. 437 իգ. ընդամենը 980 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և այգեպանութեամբ: Կան նաև նշանաւոր հիւսններ, որ աշխատում են գլխաւորապէս Բագում:

Ժողովրդի մտաւոր վիճակը, միւս գիւղերի հետ համեմատելով՝ բաւական բարձր է: Գեռ 1893 թուին բացուել է Հայոց ծխական երկսեռ դպրոց, որ շուտով նոյն գիւղացի յայտնի բարեգործ Առաքել Ծատուրեան առել է իւր հովանաւորութեան ներքոյ և պահել մինչև դպրոցների փակուելը 1896 թ. Բացի այս դպրոցից՝ շատերն էլ ունեւ են քաղաքներում, և այժմս այս գիւղից կան 3 համալսարանական, և 10 հոգի միջնակարգ դպրոցներում աւարտողներ:

Քարահունջից էլ մօտ 6 քիլոմետր դէպի հարաւ, նոյն ձորի աջ կողմում բարձրանում են երեք առանձին, ահագին ժայռեր, որոնցից մինի վրայ կայ մի հինաւուրց ամրոց: Այժմ ոչ մի ճանապարհ չկայ նրա գլուխը բարձրանալու, միայն հեռուից երևում են Բնակարանի լեռնա-ած պարիսպ և այրեր: Ոմանք, սրան Ղըղ-ղալա են կոչում, ուրիշներն էլ Գեաւուր-ղալա:

ԽՆՁՈՐԵՍԿ. — Գորիսից մօտ 8 քիլոմետր հեռաւորութեամբ դէպի արեւելք, քիրճերի մի խումբ կղզիանում է Բիւլբիւլաձոր, Քըմըխտաձոր, Չըռչըռոտ, Ալաչաւուկ, Սըռնոցի-ձոր և Պըռշնոտ ձորերով, իսկ քիրճերի բոլոր լանջերին էլ բնակութեան համար «քարատակ»-ներ են փորուած և այժմ էլ փորւում են: Քիրճերի ամենաբարձր գագաթին հնումը մի փոքրիկ ամրոց է եղել, որի միայն հետքերն են այժմ մնացել: Գիւղի մէջ բաժանուած 16 աղբիւրների ջուրը մի փոքրիկ առուակ կազմելով՝ հոսում է գիւղի միջով: Բնակարանների մեծագոյն մասը քարատակներ են, որոնցից հնագոյնները շատ բարձր

դիրք ունին, այնպէս որ ներկայումս բնակութեան համար ան-
յարմար լինելով՝ ծառայում են որպէս խոտանոցներ: Զատ դը-
ժուարութեամբ, թոկեր կապելով կարողանում են բարձրանալ
այդ այրերը և խոտ դարսել: Այժմեան բնակիչների բնակարան-
ները նոյնպիսի քարատակներ են, միայն աւելի ցած, մատչելի
տեղերում փորուած: Ո՛չ մի կանոնաւոր, և նոյն իսկ անկանոն
փողոց չկայ, այլ նեղ անցքեր տանում են մի բնակարանից
միւսը, որոնք, մինը միւսի վրայ, մինը միւսից փոքր ինչ
բարձր փորուած քարատակներ են: Սրանցից լաւագոյնները
դռների վերեւ մի-մի ծակ ունին, որտեղից արեւի լոյսը աղօտա-
բար ներս է թափանցում, միւսները միայն մի դռնով են հա-
ղորդակցւում լոյս աշխարհի հետ:

Նորագոյն բնակարանների կէսը քերծի տակ, իսկ կէսը
դուրսն են, կազմելով մի փոքրիկ դարադամ: Քարատակների
մէջ բնականից կտրուած են պահարաններ և նստարաններ:

Այժմ շինւում են նաև երկյարկանի կանոնաւոր տներ:

Զորի մէջ, որտեղով հոսում է փոքրիկ առուակը՝ կան
գեղեցիկ, կամարակապ և առջւեր բաց արհեստական այրեր,
բաւական բարձր և լայն բնական թախտերով, որտեղ երեւի
նստելիս զուարճանալիս է եղել նախկին բնակիչները բռնու-
թիւնից շունչ քաշելու համար:

Գիւղի գրեթէ կենդրոնում, նոյնպէս քերծի մէջ, փորուած
է եղել մի փոքրիկ եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդուած է:
Քայց մի այսպիսի գետնափոր եկեղեցի դեռ ևս կանգուն մնա-
ցել է գիւղից դուրս, դէպի արեւելք, մի քերծի մէջ, ուր կան
նաև գերեզմաններ, առանց տապանագրերի:

Այժմ գիւղն ունի երկու եկեղեցի, որոնցից հինը, որ բա-
ւական գեղեցիկ և կամարակապ է՝ գտնւում է գիւղի կենդրո-
նում, իսկ միւսը, որ նոր է՝ գիւղի նոր, հիւսիսային մասում:
Առաջին եկեղեցու դռան կամարակապ քարի վրայ գրուած է.
թվ. ՌՃԺԵ + ԲԷԹ. Յիսասակ է սուրբ Հռիփսիմայ եկեղեցիս,
ես Գիշու որդի Թուրախս շինել տուի սուրբ եկեղեցիս ի
հալալ աւդեանց իմոց յիւեցէ՛ք զիս ՚ի Քս:

Գիւղի հարաւ արեւելեան կողմում, քերծից մի լեզուակ է

ձգւում, որի երեք կողմից հոսում է Խնձորեսկի առուակը: Այս լեզուակի հարթ մասի վրայ կայ մի փոքրիկ եկեղեցու աւերակ, մօտը խցերի հետքեր, իսկ լեզուակի շուրջը՝ պարիսպ: Եկեղեցու հիւսիսային կողմում գտնւում է Մխիթար սպարապետի գերեզմանը այս տապանադրով.

Այս է տապան ի հանգիսեան
Իջեալ մարմնով 'ի գերեզման,
Սայ Մխիթար մեծ անուանեալ,
Սորա օնէր ի խանութիւն
Սա բեմուրաս գնաց ջիվան
Որ է երկրէն սայ Կեաննով էր:
Նահատակուեցաւ ՌՃՀԶ.

Եկեղեցու հարաւային որմին կից է՝ Մելիք-Քարխուղարի գերեզմանը, որ Տեղ գիւղի մելիքն է եղել:

Մինչև 1896 թ. այս եկեղեցին բոլորովին կանգուն էր, միայն այդ թուին գիւղացիները քանդեցին և նրա սրբատաշ քարերով նրա գաւթում երկու մեծ սենեակներից բաղկացած Հայոց եկեղեցական ծխական դպրոցի շէնք կառուցին, ուր այժմ գետեղուած է պետական երկդասեան դպրոցը:

Գիւղում կան նաև ս. Մինաս և ս. Նահատակ անունով փոքրիկ, հասարակ մատուռները, որ ուխտատեղիներ են համարւում:

Գիւղի բնակիչները բոլորն էլ Հայ լուսաւորչականներ են, ընդամենը 613 տուն 2344 ար. 1875 իգական, 4219 հոգի ի միասին: Պարապում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ, անասնապահութեամբ և մասամբ օղեհանութեամբ: Գիւղացիների մեծ մասը գնում է Քաղու մշակութիւն անելու: Այստեղ ամենից աւելի զգալի է Քաղուի կեղծ լուսաւորութեան ազդեցութիւնը. կան կանանց զղեստների 35 դերձակ, որոնցից շատերը ունին կարի մեքենաներ, թէև աշխատում են այլերի մէջ: Կան նաև կտորեղէնի 4 խանութ, ուր երևում են նաև թանկագին, արշինը 1—2 ը. արժողութեան կտորներ. 7 մանրածախսի խանութ, ուր քաղցրեղէնն ու մրգեղէնը առաջին տեղն են բռնում: Երեք էլ ներկարարի (բօյաճի) գործարան

կայ: Գիւղի բարոյական վիճակը բաւական ողբալի է. ինչ որ պակաս է թողնում Ռազուլում փչացած երիտասարդութիւնը՝ այն լրացնում են հինգ տգէտ քահանաներ, միմեանց դէմ լարած մեքենայութիւններով: Մինչդեռ հին սերունդը շատ գեղեցիկ և բարձրահասակ է՝ նորը հիւանդոտ է և փոքրահասակ:

Այս գիւղում կան բաւական աշուղներ, որոնցից նշանաւոր են աշղ Մարտիրոսը, որի աշակերտն է զարադշլաղեցի աշղ Հաղամը, և Իւսուփ օղլին, որ գրել է «Հզարի քնարը»: Նշանաւոր է նաև աշղ Ներսէս Սաղանդարեան Թառսիւնի մականուանեալը, որ մօտ օրերս հրատարակեց իւր «Նոր երգարանը»:

ԿՈՌՆՉՈՐ. — Խնձորեսկից դէպի արևելահարաւ, հազիւ 5 քիլոմետր հեռաւորութեամբ մի խոր ձորի լանջին գտնւում է Կոռնձոր գիւղը: Այստեղ կան բաւական թուով հին քարատակներ և մի քարատակ եկեղեցի: Նշանաւոր են նաև այն կոնաձև ժայռերը, որ ցցւում են ձորակի մէջ: Այժմեան բնակիչները տեղաւորուած են մասամբ այդ հին, մասամբ էլ նոր կտրուած քարատակների և մանաւանդ հասարակ զարադամների մէջ: Միակ քարաշէն եկեղեցին բաւական հին և քայքայուելու վրայ է: Գիւղի միջով անցնում է համանուն վտակը: Բնակիչները բոլորն էլ հայ լուսաւորչականներ են, 219 տուն, 761 ար. 573 իգ. Ի միասին՝ 1334 հոգի: Պարապմունքը նոյնն է, դպրոց երբէք չեն ունեցել:

ԽՆԱԾԱԽ. — Այս գիւղը գտնւում է Գորիսից դէպի հիւսիս, մօտ 25 քիլոմետր հեռաւորութեամբ: Իսկ սրա մօտ, հազիւ 2 քիլոմետր հեռու ձգւում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ առուակ: Այս ձորի երկու կողմում կան կարմիր և սպիտակ աւազախառն հողից կազմուած քերձեր, որոնք ջրի ազդեցութեամբ դանազան ձևեր են ստացել, մանաւանդ նշանաւոր են մի քանիսը, կոնուսի ձևով: Այս քերձերի մէջ ևս կան բազմաթիւ մեծ և փոքր քարատակներ, նախկին բնակարաններ: Ձորի բերանում, ուր երեք կողմից բոլորւում են լեռներ՝ քարէ պարիսպ է քաշուած և մի մեծ դարպաս թողնուած: Նոյնպիսի մի պարիսպ էլ ձգւում է փոքր ինչ բարձր, լեռների

ընդհարման կէտում, շրջափակելով մի փոքրիկ տարածութիւն, որ ձորից բաւական բարձր է: Այստեղ գտնւում է մի մեծ, 32 մ. (15 ս.) երկարութեան, 21,3 մ. (10 ս.) լայնութեան և մօտ 27,7 մ. (13 ս.) բարձրութեան քարայր, որի ձորահայեաց կողմը բոլորովին բաց է: Սա կարծես մի բնական սրահ լինի, որից դէպի բոլոր երեք կողմերը բացւում են մեծ և փոքր արհեստական քարատակեր: Սրան կից է նաև մի ուրիշ, մեծ այր, որ ծառայելիս է եղել որպէս ե'կեղեցի: Սրա երկարութիւնն է 14,2 մ. (6 ս. 2 արշ.) լայնութիւնը 9,2 մ. (4 ս. 1 արշ.) և բարձրութիւնը՝ մօտ 12,8 մ. (6 սաժէն): Սա ամբողջովին քիրծի մէջ է և միայն ձորահայեաց կողմից քարէ պատ է շինուած: Եկեղեցին ունի մի սեղան, երկու փոքրիկ սրբատնով, և երկու աւանդատուն, որոնցից հարաւայինի մէջ փորուած է աւաղան: Իսկ միւսը ծառայում է որպէս գաւիթ: Եկեղեցուց բարձր կան ուրիշ քարատակներ ևս, որոնք հաւանօրէն միմեանց հետ հաղորդակցւում են, որովհետև դրսից շատ բարձր և բոլորովին անմատչելի են:

Եկեղեցու հանդէպ և վերև, հարթութեան վրայ, կան գերեզմանաքարեր, որոնց վրայ միայն խաչեր կան քանդակուած:

Գիւղը ընկած է բլրակների լանջերին, որոնք միմեանց ընդհարուելով՝ մի փոքրիկ ձորակ են կազմում: Այստեղ բղխում է մի վարար աղբիւր, որի ջուրը հոսելով ձորի միջով, հնարաւորութիւն է տուել պարտէզներ տնկելու, որոնց մէջ մշակւում են առաւելապէս կեռասներիններ:

Գիւղի կենտրոնում գտնւում է մի հնաշէն, հասարակ եկեղեցի, իսկ նրանից բարձր, երկու փոքրիկ մատուռ և մի հին գերեզմանատուն, ուր նշանաւոր է Մելիք Հայկազի գերեզմանը:

Տները զարդամներ են, սակայն կան նաև քարատակներ, որոնցից մի քանիսը հին են, իսկ միւսները նոր են փորուած: Հին քարատակները գլխաւորապէս ծառայում են որպէս խոտանոց և գոմ:

Բնակիչներն առաւելապէս Սուլթան-քենդից գաղթած Հայ լուսաւորչականներ և շիի քրդեր են. Հայերը 188 տուն են, 834 աղ. 631 իգ. ընդամէնը՝ 1465 հոգի: Քրդերը՝ 50

տուն. 135 ար. 117 իգ. ընդամենը՝ 252 հոգի: Պարապմունքը նույն է: Գիւղում կայ չորս խանութ:

ՏԵՂ.—Այս պատմական գիւղը գտնւում է Գորիսից դէպի արևելահիւսիս, մօտ 18 քիլոմետր հեռաւորութեամբ, մի բարձրաւանդակի վրայ: Գիւղի հարաւային և հիւսիսային կողմերից ձգւում են մի-մի ձոր, որոնք գիւղի արևելեան կողմում միանալով՝ տարածւում են մինչև հաքարի գետը, Քուչուղի ձոր անունով: Հիւսիսային ձորից հոսում է մի առուակ, որ Տեղի-ջուր է կոչւում, իսկ հարաւային ձորում կան երկու աղբիւր, որ սուրբ են համարւում և պաշտւում: Գիւղում փողոցներ չկան. տների կտուղները ծառայում են որպէս բակ և փողոց: Տներից շատերը դարադամներ են, որոնց առաջը կան կամարակապ բաւական ընդարձակ բակեր, իսկ յետի մասում միւս տների տակ մտած քարատակներ, որոնք ծառայում են որպէս ախոռ կամ մառան:

Գիւղի գրեթէ կենտրոնում գտնւում է կարմիր սրբատաշ քարից շինուած մի անխորան եկեղեցի, որի երկարութիւնն է 11.36 մ. (5 ս. և 1 արշ.) լայնութիւնը՝ 4.26 մ. (2 ս.) և բարձրութիւնը՝ 7.81 մ. (3 ս. և 2 արշ.): Չեղունը կամարակապ է և առանց գմբէթի: Երկու նեղ և կարճ պատուհաններ լուսաւորում են եկեղեցին: Միակ դուռը այժմ փակուած է, իսկ արևմտեան պատը քանդելով՝ եկեղեցին 6 մետր երկարութեամբ մեծացրուած է անտաշ քարերով և մի դուռն շինուած, որի կամարակալ քարի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.

Յիշատակ է սուրբ տաճարիս վէմս, նորոգեցան Բարխուդարն իւր կողակից Թանումն Ռ... իսկ նորոգիլն թ. ՌՃ22... իսկ դռան ձախ կողմում. Յիշատակ է սուրբ տաճարիս խորհրդանոցն ձահնագարի կողակից Վառուն իւր որդի Պասալին.

Եկեղեցին պատած է պարսպով, որի մէջ բաց են թողուած ծակեր՝ հրացան արձակելու համար: Պարսպուած գաւթում կան մի քանի գերեզմաններ և նկատելի են սենեակների հետքեր: Թէ եկեղեցու և թէ պարսպի մէջ կան շատ գեղեցիկ խաչքարեր, գլխաւորապէս գերեզմանների վրայից վերցրուած:

Եկեղեցուց փոքր ինչ հեռու գտնուում է Մելիք Բարխուդարեանների ապարանքը, բաղկացած մի քանի դարադամներից, որոնց առաջը կան թաղակապ բակեր (դալան). սրանցից մինի վրայ գրուած է.

ԹՎ. ՌՄԼԲ. ի վայելումն մելիք Բարխուդարի ուրբի Դաւիթ բէկս շինեցի ամառաթա Իբրայիմ խանի ժամանակ:

Այս ապարանքից փոքր ինչ հեռու գտնուում է հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիւ հին և գեղեցիկ տապանաքարեր: Հետաքրքիր են մեծատունների գերեզմանաքարերը. սրանք երկու մետրից աւելի երկարութեան, 71 սանտ. բարձրութեան և մօտ 36 ս. լայնութեան քառանկիւնի քարեր են, որոնց երկու երեսների վրայ, գեղեցիկ նշխերի մէջ զանազան տեսարաններ են քանդակուած, օրինակ. մի առիւծ խեղդում է մի գառ, կամ մի իշխան գինի է ընդունում մի ծառայից, մի աշուղ էլ ածում է: Այս տապանաքարերի ներքին մասում դէպի ոտների կողմը, կանգնեցրած են $2\frac{1}{4}$ արշ. բարձրութեան միակտուր քարեր, որոնց արեւմտեան երեսին խաչ է քանդակուած, իսկ արեւելեան կողմի ներքին մասում բարձրաքանդակ «օջախ» դուրս բերուած: Այս վերջինը նշանակում է, որ ննջեցեալը մեծ օջախից է եղել:

Բնակիչները բոլորն էլ հայ լուսաւորչականներ են, 472 տուն. 1871 ա. 1288 իգ. ընդամենը՝ 3159 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, այգեպանութեամբ և օղեհանութեամբ:

Գիւղի մտաւոր վիճակը նախանձելի չէ. միմիայն անցեալ 1897 թ. բացուեց պետական միդասեան դպրոց: Գիւղացիների վարկն էլ բաւական ընկած է. սրանք յայտնի են որպէս կրթուարար, անհիւրասէր, խաբեբայ և գող մարդիկ:

Գիւղը այժմ պատկանում է Դուլուխանեանին, Աթաբէկեանին և թիւրք Ռուստամբէկովին, մինչդեռ առաջները պատկանելիս է եղել Տաթևի վանքին, որովհետև Ջահանգուխտ Պշխույի դատակերտն է եղել, և սա իւր ամուսին, Սմբատի,

Սիւնեաց առաջին թագաւորի հոգու փրկութեան համար 928 թուին նուիրել է Տաթևի վանքին ¹⁾։

Տեղից սկսած մինչև Զաբուխ կայարանը շարուած են փոքրիկ կուրգաններ, որոնցից մի քանիսը այս տարի (1898) ամառը պեղեց Ռէօսլէր գերմանացին։ Գտնուեցան բրոնզէ մի դանակ, հուլունքներ և կաւէ ամաններ։

ԲԱՐԿՈՒՂԱՏԻ ՁՈՐ.

Բարկուշատի կամ Ջնհէրի ձորն կոչուած է Բարկուշատ գետի ձախ ափը սկսած սառանի կամուրջից՝ մինչև Գառուտլու գիւղը, որտեղ խառնուած են Բարկուշատի և Գորիսի գետերը։ Այս ձորը Ջնհէր և խոտ գիւղերի մօտ բաւական ընդարձակուելով՝ կազմում է մի գեղեցիկ հովիտ։ Ձորի աջ ափն ընդհանրապէս շատ դառիւվայր է և դժուար մատչելի. տեղ-տեղ ծածկուած է ծառերով և թփերով, տեղ-տեղ էլ ահագին ապառաժներով։ Ձախ ափը, ընդհակառակը, բաւական թեք է, և տեղ-տեղ ունի առաջ ցցուած փոքրիկ սարահարթեր։ Այս կողմումն են Հալիձոր, Ջնհէր և խոտ գիւղերը։ Բարկուշատ գետի ափերը ծածկուած են խաղողի այգիներով։ Ձորի մէջ նկատուում են պղնձի հանքեր։ Ալիման շատ տաք է և խեղդիչ։

ՀԱՆՔԱՅԻՐ.—Գտնուում է Բարկուշատի ձախ ափին, ձորի լանջին։ Արևմտահիւսիսային կողմում բարձրանում է Գեալինդայան, որի առաջ ձգւում է Զահանդուխտի ձորը, իսկ հարաւային կողմում, գետի դարձեալ աջ ափին, երևում է Հարանց անապատը, որ երկրաշարժի ժամանակ բարձրից իջել է ներքև։ Տները քարաշէն են, միմեանց վրայ կիտուած, որոնց մինի կտուրը ծառայում է միւսին որպէս բակ և ճանապարհ։ Կան մի երկու փողոց, որ շատ անկանոն և քարքարոտ են։ Գիւղի կենտրոնում գտնուում է եկեղեցին, որ սլարսպապատ է, գեղեցիկ և գմբէթաւոր։

Ձորը լի է խաղողի այգիներով, որի զինին շատ գովուած է։

¹⁾ Սիւսական եր. 263.

Բնակիչները բնիկ հայ լուսաւորչականներ են, 66 տուն, 283 ար. 252 իգ. ընդամենը՝ 535 հոգի: Պարապում են այգեգործութեամբ, երկրագործութեամբ և անասնապահութեամբ:

Գիւղը պատկանում է Տաթևի վանքին, որին նուիրել է Ժ. դարում Բաբկէն իշխանի Համասպրուհի դուստրը ¹⁾:

Ժողովրդի մտաւոր դրութիւնը շատ աննախանձելի է. դրպրոց երբէք չեն ունեցել և հազիւ թէ 15 հոգի գրագէտ լինին. քացի սրանից էլ անհիւրասէր են:

Հալիձորից փոքր ինչ հիւսիս, դէպի Ջնհէր, գետի ձախ ափին, մի բլրի վրայ կայ մի փոքրիկ եկեղեցու աւերակ և սրամօտ երկու խաչարձան տապանաքար, որոնցից մինի վրայ գրուած է.

Անուն Այ ես Տարսայինս որդի Լիպառսի գՀալիձորոյ Թ. Կոպարս վնսարովն ոյ տարսանդովն սրանէս քարգործին հերենիք սվի որդիք թուն եւթ... քարգործն եկեղեցի շինեցան վարձն որ այվանս ես գայն նրայ դասման փոխաբէն քար արի որ նրայ հայրենիք յազգէ յազգ. սվ այս գիրս խափանելոյ ջանայ յիմոց կամ աւսարաց, յժը հայրապետացն նգովեալ եղիցի:...

Միւս կողմում.—Ես ք հայր վկայեմ. ես ք Սարգիս վկայ եմք:

Միւսի տապանագիրն անընթեռնելի է:

Այս բլրակից ներքեւ, գետի անմիջապէս ափին կան նոյնպէս տապանաքարեր, որոնցից մինի վրայ գրուած է.

Ի թվիս 267 ես Գրիգորիկ բագում աշխատութեամբ ետի գառ ց սն սնկեցի գբուխթելուաց կեսս իգիս վայելուչ այ իշխանութեան ածասէր պարոնացն Սմայասայ եւ հարագասին իւրոյ Տարսաինին. ես Տարսաինս գիր սվի հայրենեացս... Թէ ոք ի Հայոց... ի Տանկաց իլեցէ, ԼԾԸ հայրապետաց նգովեալ եղիցի:

Ջնհէր.—Հալիձորից հազիւ երկու վերստ հեռաւորութեամբ, դէպի հիւսիս, Բարկուշատի ձախ ափին տարածւում է

¹⁾ Տես Սխական.

Ղնհէր գիւղը, բռնելով ձորի վերին լանջը: Այս գիւղը սոյն ձորի գիւղերից ամենից մեծը լինելով՝ գուցէ հէնց այս պատճառով էլ կոչուել է Ղինահայր, կամ Ղինուհայր, որ ոմանք էլ բառերի տեղափոխութեամբ հայրաշէն են գրել: Ձորի վերին մասը, գիւղի արեւմտեան կողմը, պատած է ահագին ժայռերով, որոնցից մինը մի փոքրիկ քարախորշ է կազմում, որ պաշտում է և վառուած մոմերից բոլորովին սևացել է: Փայռի գագաթին էլ մի փոքրիկ, անմատչելի մատուռ կայ: Սրանից փոքր ինչ արեւելք ժայռերը վերջանում են, և մի փոքրիկ ձորակի մէջ բացւում են բաւական թուով մեծ և փոքր քարատակներ, որոնց մօտից հոսում է մի բարակ աղբիւր, որ նոյնպէս սուրբ է համարւում: Այս աղբիւրի մօտ բղխում է և մի ուրիշ աղբիւր, շատ վարար, որ անցնելով ձորը՝ թափւում է Բարկուշատի մէջ: Գիւղի արեւելեան կողմում ևս կան քարայր-բնակարաններ, որոնց տեղացիք Հալիփօրի ծակեր են կոչում: Սրանցից մի քանիսի մէջ կան թոնիրներ:

Գիւղի գրեթէ կենտրոնում գտնւում է ս. Ստեփանոս եկեղեցին, որ բաւական մեծ և գեղեցիկ է, չորս սիւների վրայ հաստատուած, կամարակապ ձեղունով: Հարաւային դռան առաջ չորս սիւների վրայ բարձրանում է մի գեղեցիկ գմբէթ, որ ծառայում է որպէս զանգակատուն: Եկեղեցու պատուհանները փոքր են և նեղ. ներքուստ զարդարուած է խաչկալով և հինգ ջահերով: Եկեղեցու շուրջը կան հին և նոր գերեզմաններ: Մի ուրիշ գերեզմանատուն էլ կայ գիւղի արեւելեան կողմում, ուր կան խաչքարեր Փ. Գարից:

Գիւղի արեւմտահարաւային կողմում, ձորի մէջ ցցուած մի քերծի գագաթին տեղաւորուած է ս. Աստուածածնի անունով կուսանաց անապատը, որ շինել են 1676 թուին, Ագուլիսից գաղթած կոյսերը և վերանորոգել է մահս եսի Ագարիան և նրա որդի՝ Բենիամինը:

Կուսանոցը պարսպապատ է և երեք աշտարակներով պաշտպանուած: Վերի մասում գտնւում է մենաստանը, որ 17,4 մետր (8 սաթէն և $1\frac{1}{2}$ արշ.) երկարութիւն, 10,65 մ. (5 ս.) լայնութիւն և 9,6 մ. ($4\frac{1}{2}$ ս.) բարձրութիւն ունի և շի-

նուաճ է կուխածոյ անտաշ քարերով: Չեղունը կամարակապ է և ունի մի փոքրիկ գմբէթ: Պատուհանները փոքր են և նեղ. միակ դուռը բացուում է հարաւային կողմում մի գաւթի մէջ, ուր կան մի քանի դերեզմաններ: Եկեղեցու արևելեան կողմում, դրսից, մի խաչ կայ, որի մասին ասում են, թէ բժշկութիւն է տալիս օձից խալթուածներին, եթէ միայն նրանք խալթող օձից առաջ կարողանում են դալ և խաչը համբուրել:

Տաճարի վրայ կան հետևեալ արձանագրութիւնները.

Արևմտեան կողմը, մի խաչի վրայ.

„Ես չոգեմեղս կանգնեցի զխաչս հօրն իմոյ Ասէսայ. թվին չայոց չլ:

Սեղանի որմի վրայ.

„Ճնորհօք սուրբ չոգւոյն շինեցաւ տունս ապաւէն. թվին չայոց ոճիւ: Ի չայրապետութեան Սրբազան տառն Յակոբայ:

Սեղանի մօտի առաջին սեան վրայ.

„Ճնորհօք սուրբ չոգւոյն շինեցաւ տունս ապաւէն. թվին չայոց ոճիւ. Ի հայրապետութեան սրբազան տառն Յակոբայ. Եւ ի թագաւորութեան Պարսից ճահ Սուլէյմանին, յԱրքեպիսկոպոսութեան Երկրիս տէր Յովնանիսի:

Միւս կողմում, կամարի վրայ.

„Ազդամբ սուրբ չոգւոյն ես ամենամեղս մահտեսի Ագրիս, որ եւ տեղեալ Ագուլեաց դաւեսէն, եկի ի ժողովարանն կանանց, եւ ետու շինել զեկեղեցիս Երջապատօք եւ սուրբ տաճրք լ. օր տաք էր, որ էր յամի ծննդեան իննեկի թվին ոճիւ: Եւ աղաչեմ զամենեսեան, որ աս կայ:

յաղօթս 'ի մէջ տանարիս յիշել զմեզ եւ ծնողս մեր, զհայրն իմ մահօտի եւրդուլին եւ զմայրն իմ չնիւսիմէն, եւ զկենակիցն իմ զՈսկին, եւ զորդիքն իմ զՊետրոսն եւ զԲենիամինն:

Սրա ներքեւ.

„Ես անարժան մահօտի Բենիամին, որ եմ յերկրէն Գողթնեաց դաւժէն, եւ իմ որդի մահօտի Ազարին, որ ետ շինել Տանարս եւս նորոգել սալն յիշատակ հոգւոյս կենակից Մարգարտին, հանգուցեալ եղբայր մահօտի Պետրոսին իւր որդւոյն Նիկողայոսին, Հայրապետին, որդիքն իմ Յովաննէսին, Մկրտչին, Կարապետին. թվին Հայոց ռնկթ ին, յիշենէք ուռտայ Մուրաս յերկրէն Քրդասանս:

Գռան ճակատին

„'Ի թվին տառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ուրիշ ին, իսկ Հայոց ռնիւ ին, եղեւ շինութիւն եկեղեցւոյս եւ արդեամբք աղախնեաց, որք ժողովեալ կայաք առ յԱնապատս՝ թուով անձինս ութսուն, զկնի ամաց շինութեան տանս շարժեալ զնացաք ոմանքս յԱզուլեաց երկիրն եւ եկեալ ասէն եւ բազում աշխատութեամբ եւ ճալով վասակոց իւրոց շինեաց զեկեղեցիս, ապրելի դ ին, սկիզբն արարեալ սկսեմքերի ը ին կատարեաց. վասն որոյ աղաչեմ զկնի մեր եկեալ քերցդ եւ կուսանացդ զերախտիք եղբոր մերոյ....:

Տաճարից փոքր լինչ ներքեւ գտնուում է մի բաւական մեծ, թաղակապ սեղանատուն, որի դռան կամարակալ քարի վրայ գրուած է. Զինեցաւ թւ ՌՃԿԹ յիշատակ է սեղանատունս որ ի երկրէն Գողթնիեաց ի գեղջէն Յովայ ի Պլանի որդի Ոհաննէսին եւ իւր որդի Ծատուրին:

Սեղանատնից էլ փոքր ինչ ներքե գտնուում է մի փոքրիկ եկեղեցու աւերակ:

Պարսպին կից կան մօտ 40 խուց և մի բաղանիք:

Նոյն պարսպի մէջ, եկեղեցու մօտ 1891 թուին Պալի-եանց քահանայի ջանքով շինուած է չորս սենեակներից բաղկացած մի գեղեցիկ շէնք, հայոց եկեղեցական-ծխական դպրոցի համար: Մի աղբիւր ևս բերուած է այդ տեղ:

Այժմ անապատը բոլորովին անխնամ է թողնուած, իսկ դպրոցական շէնքում շուտով բացուելու է պետական դպրոց:

Գիւղը, շնորհիւ տանուտէր Զիրինեանի, ունի բաւական լաւ ճանապարհներ, որոնք գիւղի բարձրագոյն կէտից սկսուելով՝ իջնում են մինչև Բաղարչայի ափը, որտեղ ձգուած են գիւղացիների խաղողի այգիները:

Բնակիչները բնիկներ են, հայ լուսաւորչական. ընդամէնը 186 տուն, 804 արական և 705 իգական. ի միասին 1509 հոգի: Պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ և այգեպանութեամբ:

Մտաւորապէս այս գիւղացիները բաւական բարձր են նոյն ձորի գիւղացիներից, որովհետև բաւական ժամանակ ունեցել են դպրոց և տասնեակ երեխաներ սովորում են Զուշու հայոց թեմական և պետական դպրոցներում:

ԽՈՏ.— Զնհէրից հազիւ մի վերստ հեռու, դէպի արևելահիւսիս, նոյն ձորի ձախ լանջին տեղաւորուած է Խոտ գիւղը: Այստեղ հովիտը աւելի գեղեցիկ տեսք է ստանում, որովհետև այս լանջը, գլխին ունենալով ահագին ժայռեր՝ ներքևի մասում լեզուաձև տարածւում է և մի փոքրիկ հարթութիւն կազմում: Թթենիներն ու խնձորենիները, որ ծածկում են այս հարթութիւնը և թանձր ստուեր արձակում ցրուած տների վրայ՝ մի գեղեցիկ տեսք են ընծայում գիւղին: Ո՛չ պակաս գեղեցիկ է նաև այն խոր ձորը, որ ձգւում է Զնհէրի և Խոտի մէջ, հիւսիսից, հարաւ: Այստեղ կոնաձև ժայռերն զիգուած են մէկը միւսից բարձր, որոնց միջով հոսում է մի փոքրիկ, լրստակ աղբիւր: Սա կոչւում է «Օխնած-ջուր», որովհետև, ասում են, թէ հին ժամանակներում Քրիստոսի մկրտութեան խոր-

Հուրդը կատարելիս, այստեղ էին իսաչը ջուրը ձգում: Փայռերի մէջ կան բաւական թուով արհեստական և մի քանի բնական քարայրներ: Այսպիսի քարայրներ կան նաև ձորի գլխին ցցուած ժայռերի մէջ, որոնցից մինի մօտ շինուած է ս. Գէորգ անունով մի փոքրիկ մատուռ:

Տները, գիւղի վերի մասում, կուտակուած են միմեանց վերայ, իսկ հարթ մասում՝ ցրուած են այգիների մէջ: Միակ եկեղեցին թաղակապ է, անսիւն, առանց գմբէթի և աւանդատների. և թէպէտ շատ հին է՝ բայց ոչ մի արձանագրութիւն չունի:

Գիւղի արևմտեան կողմում, պաշտուող դարաւոր ծառերի տակ, կայ մի եկեղեցու աւերակ և գերեզմանաքարեր ժ. դարից:

Գիւղի ճանապարհը սաստիկ քարքարոտ և շատ վատ է: Բնակիչները լուսաւորչական Հայեր են, ընդամենը 134 տուն, 482 ար. 427 իգ. ի միասին՝ 909 հոգի: Պարագում են երկրագործութեամբ և այգեպանութեամբ: Հողը պատկանում է Տաթևի վանքին, որին նուիրել է Գլեն իշխանը ժ. դարի առաջին կիսում (1045 թ.): Եւ վերջերը՝ Տարսայիճ իշխանն էլ նորից վերադարձրել է նույն վանքին իւր ձեռատունկը այգու հետ միասին ¹⁾:


ՆՁԱՆԱԻՈՐ ՎԱՆՔԵՐ.

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ.

Գտնւում է Գորիսից դէպի հիւսիս, մօտ քսան քիլոմետր (20 վերստ) հեռաւորութեամբ, Աղ-օղլան գետի աջ ափին, մի փոքրիկ բլրի տափարակ գաղաթին: Զուրջը կան մեծ և փոքր բլրակներ, որոնք, միմեանց ընդհարուելով՝ մի գեղեցիկ տեսարան են ներկայացնում: Վանքը պարսպաձև է և ունի մի դարպաս, իսկ զաւթում խցերի աւերակներ:

¹⁾ Սիսական. Եր. 260.

Եկեղեցին սրբատաշ քարով շինուած, հռովմէական ճարտարապետութեան շէնք է: Երկարութիւնն է 21,3 մետր. (10 ս.) լայնութիւնը՝ 7,81 մետր. (3 ս. 2 արշ.) և բարձրութիւնը՝ 18,46 մետր. (6 ս. 2 արշ.) երկու կարգ վեցական սիւներով եկեղեցին բաժանուած է երեք ճակ (nef), միջինը աւելի լայն՝ քան կողքերինը: Հիւսիսային պատի վրայ էլ կան



Ծիծեռնաւանք:

նոյնչափ կեղծ-սիւններ, որոնց վրայ, պատին կից, բոլորում են կեղծ-կամարներ: Այս սիւները քառանկիւնի են, ծաղկաւոր խարիսխներով, որոնց վրայ բոլորում են ռոմանական կամարներ, իսկ սրանց վրայ զետեղուած են կամարակապ ձեղունները: Միջին մասի ձեղունը աւելի բարձր է և կողքերից երկ-երկու պատուհան ունի, որոնց միջով ներքևից նայողին երևում են կողքի ձեղունների վրայ շինուած սենեակները: Մի սենեակ էլ սեղանի վերև կայ: Այստեղ մի փոքրիկ, կլոր ծակ ևս կայ, որի վրայ բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկէ:

Եկեղեցին ունի երկու աւանդատուն, որոնցից հիւսիսայինի առաջ կայ մի գերեզման, ուր աւանդութեան ասելով, ամփոփուած է Պետրոս առաքեալի ճկոյթ մատը (ծիծեռնը): Եօթն երկար և փոքր ինչ նեղ պատուհաններ առատութեամբ լոյս են սփռում: Երեք դռնից երկուսը այժմ ծածկուած են, բաց դռան կամարակապ քարի վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը:

«Նորոգեցաւ գաւիթս եւ զանգակատունս ի ժամանակին Իբրայիմ խանին... ԹՎ. ՌՄԻԲ: Սակայն այս յիշուած գաւթի ու զանգակատան միայն աւերակներն են մնում նայն դռան կողքին:

Եկեղեցու արեւմտեան կողմում կայ մի մեծ քար, որ կոչւում է Ագռաւախաչ¹⁾:

Հաստատապէս յայտնի չէ, թէ այս եկեղեցին երբ և ո՞ւմ ձեռքով է շինուած, միայն Ստ. Օրբելեանը կարգում է նրան Սիւնեաց անուանի վանքերի շարքում և յիշում նրա վանահայր Ստեփաննոսին Թ. դարի կիսին (844): Օրբելեանից յետոյ այս վանքի մասին աննշան յիշատակութիւններ են լինում, որոնք ցոյց են տալիս, որ սա կանգուն է եղել ԺԵ, ԺԶ և ԺԷ դարերում²⁾: Այժմ մեծ ուխտատեղի է համարւում և համբարձման ու Ս. Խաչի օրը Զանգեզուրի բոլոր կողմերից հազարաւոր ուխտաւորներ են գալիս այստեղ, ու 1200—1400 ոչխար մորթւում: Վանքի մօտ գիւղ չկայ, ուստի և առանձին

¹⁾ Այս խաչի մասին աւանդութիւնը պատմում է հետեւեալը. — Ծիծեռնաժողովը շինելիս ահագին կաթսան տանում են գետը, ջրով լցնում և բերում կերակուր եփում բանուորների համար: Այս ժամանակ ջրի հետ մի օձ էլ է ընկնում կաթսան և մնում աննկատելի: Երբ կերակուրը եփւում է և հասնում է ճաշի ժամը՝ մի ագռաւ պտտւում է կաթսայի վերև և շարունակ կռկռում: Բանուորները ուշադրութիւն չեն դարձնում և նստում են ճաշելու, երբ ագռաւը ահագին կռկռոցով ընկնում է կաթսայի մէջ: Բանուորները կերակուրը պղծուած համարելով՝ թափում են, և ո՞րքան մեծ է լինում նրանց դէպի ագռաւն զգացած հիացումը՝ երբ կերակրի մէջ տեսնում են օձի մարմնի մասերը: Իսկոյն հասկանում են, որ ագռաւը փրկել է իրանց բոլորի կեանքը, ուստի և պատանքում են նրան և մեծ հանդիսով թաղում վանքի արեւմտեան պատի մօտ, մի մեծ քարի տակ, իսկ օձի պատկերը նկարում վանքի սիւներից մինի վրայ:

Մինչև այժմ էլ այդ ագռաւը պաշտւում է, և երբ երեխաները շուտ չեն սկսում քայլել, չեն «ոտնրւորւում», տանում են այդ քարի մօտ, քարի առաջ մոմ վառում, մի մեխ կամ մի ձու դնում քարի տակ և երեխայի ոտներին ջուր ածում, հաւատալով, որ այսպիսով նա շուտով կսկսի քայլել:

²⁾ Սիսական եր. 268.

նչ մի պահպանութիւն չունի վանքը. բայց որովհետեւ թուրքերըն էլ այդ վանքը զօրաւոր ուխտատեղի են համարում, կոչելով *Աշդ-օղլան*, և շատ անգամ ուխտ գալիս, այս պատճառով էլ վանքը անվնաս և մաքուր է պահւում:

Մինչև 1894 թուականը վանապահ քահանաները իւրացնում էին ուխտաւորներից ստացուած նուէրները, բայց այս թուից սկսած՝ շնորհիւ գործակալ Հայր Խոսրով վարդապետի, որ ս. Խաչի տօնին գնում է անձամբ հսկելու արդիւնքի վրայ, հաւաքւում է և պահւում վանքի նորոգութեան վրայ ծախսելու նպատակով: Մինչև այժմ հաւաքուած է 250 ռ.: Այժմ վանապահ կարգուած է Խընածախ գիւղի քահանայ արժ. Տէր Արսէն Աստուածատրեանը, որ միայն ուխտի օրերն է այնաեղ լինում:

ՊԱՆՏԱԼԷՕՆ ԲԺՂԿԻ ՄԱՏՈՒՌԸ.

Ղարաղշլախ հայաբնակ գիւղի արեւելեան կողմում բարձրացող բլրակի վրայ գտնւում է Պանտալէօն բժշկի մատուռը, որ նոյնպէս մեծ ուխտատեղի է: Սա մի հասարակ, բաւական մեծ մատուռ է, որի մէջ գտնւում է Պանտալէօն բժշկի գերեզմանը: Սրա տապանաքարը սկզբում մի հասարակ կոճղ է եղել, բայց յետոյ շուշեցի Թ. Թամիրեանի ծախքով քար է ձգուած: Այս մատրան մօտ գտնւում է մի ուրիշ, շաա փոքրիկ մատուռ ևս, որի մէջ նոյնպէս մի գերեզման կայ: Ոչ մի արձանագրութիւն չկայ, միայն ժողովուրդն ասում է, թէ այդ գերեզմանը «Չահգագինն» է:

Ժողովուրդը Պանտալէօն բժշկին պարոն Պիժ է կոչում և մեծ հաւատով վերաբերւում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԵՐԱԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Ջանգեղուր գաւառամասի այն գիւղերում, ուր այժմ թուրքեր են վերաբնակուած՝ կան բաւական թուով Հայոց հին, աւերակ եկեղեցիներ: Սրանք ընդհանրապէս ճարտարապետական

տեսակէտից մի առանձին նշանակութիւն չունին: Սրանցից շատերը դեռ ևս կանգուն են, միւսները կիսով կամ բոլորովին քանգուած: Մահմետականները եթէ հիմնովին չեն աւերել այս եկեղեցիները և քարերը տարել գործ ածել՝ նրանց շահագործել են՝ դարձնելով առաւելապէս խոտանոց, գոմ, կամ ոչխարի փարախ: Այսպէս՝ Զիջիմլի գիւղի սրբատաշ, հրաշալի եկեղեցին քանդուած է և նրա քարերով մզկիթ շինուած: Հերիկի, Մերիկի, Բայենդուրի, Հոջասի, Փչանիսի, Չրախլուի եկեղեցիները խոտանոցներ են դարձուած, Կատոսի, Սունասարի, Ղորղղաճիի եկեղեցիները իբր փարախ կամ գոմ են ծառայում: Նոյն դրութեան մէջ է նաև Ալիդուլի-ուշաղի թրքաբնակ գիւղի ժայռի մէջ փսրուած փոքրիկ եկեղեցին, որից փոքր ինչ բարձր կան քարայրներ և հնձաններ ու դիպիճաղ (կարաս) ¹⁾:

¹⁾ Զանց ենք առնում նկարագրելու քրդաբնակ և թաթարաբնակ գիւղերը, որովհետև դրանց մէջ ոչ պատմական և ոչ էլ ճարտարապետական տեսակէտից նշանաւոր մի որևէ բան կայ: Դրանք հայկական գիւղերից տարբերւում են միայն նրանով, որ աւելի կեղտոտ են և տներն էլ աւելի հասարակ: